ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

ԲԱԶՄԻՄԱՍՏ ԲԱՌԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԳ.00.02.-«Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (հայոց լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ.Մ.Խաչատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջ.Հ. Գյուլամիրյան

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Վ. Սուքիասյան

Առաջատար կազմակերպություն՝ Գավառի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018թ. սեպտեմբերի 26-ին՝ ժամը12 -ին, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է2018թ. օգոստոսի 24-ին :

Մանկավարժության 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ա. Հ. Սվաջյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ելնելով ուսուցման հաղորդակցական-գործառական ու կոմպետենտային մոտեցումներից և հայոց լեզվի՝ որպես ազգային ինքնագիտակցության ձևավորման կարևորագույն գործոնի, արդյունավետ ուսուցման անհրաժեշտությունից՝ մենք որպես հետազոտության թեմա ընտրել ենք բազմիմաստ բառերի ուսումնասիրման հիմնախնդիրը հիմնական դպրոցում:

Մեր ատենախոսության արդիականությունը պայմանավորված է մի կողմից՝ սովորողների գրավոր և բանավոր խոսքում բազմիմաստ բառերի իմացության կարևորությամբ, անձի հաղորդակցական կարողությունների ձևավորման, միջանձնային հարաբերությունների կարգավորման, անձի սոցիալականացման ոլորտներում ունեցած դերով, մյուս կողմից՝ հիմնական դպրոցի հայոց լեզվի ծրագրում և 5-9-րդ դասարանների դասագրքերում խնդրի ոչ պատշաճ ուշադրության բացակայությամբ:

Բազմիմաստ բառերն ունեն գործառական և ոճական յուրահակություններ. դրանց ուսումնասիրումը նպաստում է սովորողների լեզվամտածողության զարգացմանը, ձևավորում է խոսքի մասերի՝ գոյականի, ածականի, բայի, մակբայի բազմիմաստության յուրացման,Ինչպես նաև բանավոր և գրավոր խոսքում դրանց ճիշտ կիրառության հմտություններ:

Հիմնախնդրի մշակվածության աստիճանը. Հայոց լեզվի քերականության ուսուցման հարցերը խորությամբ դիտարկվել են Մխիթարյան միաբանության նվիրյալների՝ Մ.Սեբաստացու, Մ.Չամչյանի, Գ.Ավետիքյանի, Վ.Չալըխյան-Ա.Այտընյանի, Բ. Դպիրի և ուրիշների աշխատություններում:

Հայոց լեզվի ուսուցման մեթոդիկայի հարցերը դիտարկվել են Խ. Աբովյանի, Ս. Մանդինյանի, Ա. Բահաթրյանի, Ղ. Աղայանի, Հ. Հինդիլյանի, 20-րդ դարի լեզվաբաններ, մանկավարժներ Է.Աղայանի, Ա.Ղարիբյանի, Ա.Տեր-Գրիգորյանի, Ս.Գյուլբուդաղյանի, Պ.Խաչատրյանի, Ջ.Գյուլամիրյանի, Ս. Մանուկյանի, Ֆ.Խլղաթյանի, Ս. Սարուխանյանի, Մ.Միրումյանի և ուրիշների կողմից:

Հետազոտության նպատակն է մշակել հիմնական դպրոցում բազմիմաստ բառերի ուսումնասիրման արդյունավետ մեթոդիկա և այն փորձարկել հիմնական դպրոցի միջին դասարաններում՝ հիմք ընդունելով լեզվական այդ իրողության հաղորդակցական-գործառական կարևոր հատկանիշները:

Հետազոտության օբյեկտը հանրակրթական հիմնական դպրոցում սովորողների բառապաշարի հարստացման գործընթացն է:

Հետազոտության առարկան բազմիմաստ բառերի ուսումնասիրման մեթոդիկան է հիմնական դպրոցում:

Հետազոտության վարկածի համաձայն՝ հիմնական դպրոցում բազմիմաստ բառերի ուսումնասիրումն արդյունավետ կլինի, եթե մշակվի և ներդրվի այնպիսի մեթոդական համակարգ, որը լեզվական այդ իրողության յուրացումը կծառայեցնի սովորողների բառապաշարի հարստացմանը, հաղորդակցական կարողությունների ձևավորմանը, բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտությունների զարգացմանը:

Հետազոտության նպատակին, օբյեկտին, առարկային և վարկածին համապատասխան՝ ձևակերպվել են հետևյալ **խնդիրները.**

1. ուսումնասիրել հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ լեզվաբանական, հոգելեզվաբանական, մանկավարժական, մեթոդական գրականություն,
2. վերլուծել հիմնական դպրոցի հայոց լեզվի չափորոշիչները, ծրագրերը և դասագրքերը՝ բազմիմաստ բառերի ուսումնասիրման տեսանկյունից,
3. իրականացնել բազմիմաստ բառերի գործառական և իմաստաբանական հատկանիշների տիպաբանական վերլուծություն,
4. մշակել և հիմնական դպրոցի միջին օղակում փորձարարական ուսուցմամբ ստուգել բազմիմաստ բառերի ուսումնասիրման նպատակը,
5. Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա ներդնել բազմիմաստ բառերի ուսումնասիրման գործընթացի արդյունավետությանը նպաստող մեթոդական ցուցումների համակարգ:

Առաջադրված խնդիրները լուծելու համար կիրառվել են հետազոտության հետևյալ **մեթոդները.**

- **Գիտատեսական՝**
  ա) հիմնական դպրոցում հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի, դպրոցական ծրագրերի, դասագրքերի ուսումնասիրում և վերլուծություն,
  բ) հայոց լեզվի ուսումնասիրման գործընթացի դիտարկում՝ բազմիմաստ բառերի յուրացման տեսանկյունով, դասալսումներ՝ հաշվի առնելով ժամանակակից դասին ներկայացվող պահանջները:
- **Վիճակագրական՝** հետազոտության արդյունքների տվյալների վերլուծություն:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են կազմել լեզվի ուսուցման վերաբերյալ տեսությունները՝

- ***լեզվաբանական*** (Մ.Աբեղյան, Ա.Աբրահամյան, Գ.Ջահուկյան, Ա.Ղարիբյան, Ս.Գյուլբուդաղյան, Լ.Վասիլև, Դ.Ն.Շմելյով և ուրիշներ),
- ***մեթոդական*** (Ս.Մանդինյան, Ա.Բահաթրյան, Հ.Հինդիլյան, Գ.Էդիլյան, Ղ.Աղայան, Ա.Տեր-Գրիգորյան, Մ.Գ.Աստվածատրյան, Լ. Ասատրյան և Գ. Հակոբյան, Ջ.Գյուլամիրյան և ուրիշներ):

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված է աշխատանքի գիտական կառույցով և մեթոդաբանությամբ, հանրակրթական դպրոցներում առկա կրթադաստիարակչական գործընթացի վերլուծությունների արդյունքով, փորձարարական աշխատանքների ընթացքում 6-9-րդ դասարաններում սովորողների և դասավանդող ուսուցիչների բավարար քանակով և ակտիվ ներգրավվածությամբ:

Հետազոտության գիտական նորույթը.

- բազմաբնույթ ուսումնասիրությունների հիման վրա մշակվել և հիմնական դպրոցում ներդրվել են բազմիմաստ բառերի ուսուցման մեթոդիկա, ուսուցման սկզբունքների, վարժությունների, առաջադրանքների, ուսուցման ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների և մանկավարժական պայմանների համալիր,
- մշակվել և փորձարկվել են բազմիմաստ բառերի ուսումնասիրման դասերի աշակերտակենտրոն մոդելներ:

Հետազոտության տեսական նշանակությունը.

- բացահայտվել են հիմնական դպրոցի միջին օղակում բազմիմաստ բառերի ուսումնասիրման գործընթացի առանձնահատկությունները և գիտամանկավարժական սկզբունքները,
- մշակվել և առաջարկվել են բազմիմաստ բառերի ուսումնասիրման տեսական նոր դրույթները, որոնք ընդլայնում են հայոց լեզվի ուսուցման մեթոդիկայի բովանդակությունը և հիմք են ծառայում դասընթացի՝ գիտամեթոդական տեսանկյունից ճիշտ կազմակերպմանը:

Հետազոտության գործնական նշանակությունը. Հետազոտության արդյունքները կարող են ներդրվել հանրակրթական դպրոցի հայոց լեզվի ուսուցման գործընթացում, ինչպես նաև կիրառվել միջին դպրոցի ծրագրերում և մայրենիի ու հայոց լեզվի դասագրքերում:

Հետազոտության հիմնական փուլերը.

Առաջին փուլում (2008-2010 թթ.) սահմանվել են հետազոտության նպատակը, գիտական վարկածն ու խնդիրները: Իրականացվել է հետազոտության հիմնախնդրին վերաբերող լեզվաբանական, մեթոդական, հոգեբանական, մանկավարժական գրականության ուսումնասիրում և ներկայացված դպրոցների վերլուծական դիտարկում:

Երկրորդ փուլում (2012-2014 թթ.) անցկացվել է փորձարարական հետազոտություն դպրոցներում. փորձարկվել են մշակված առաջադրանքները, վարժությունները, առաջարկվող մեթոդները, միջոցները և տեխնոլոգիաները:

Երրորդ փուլում (2015-2016 թթ.) ձևավորվել է հիմնական դպրոցում բազմիմաստ բառերի ուսումնասիրման մեթոդական համակարգը, և կազմակերպվել դրա կիրառման փորձուսուցումը 6-9-րդ դասարաններում: Իրականացվել է հետազոտության արդյունքների մշակում և ամփոփում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Հիմնական դպրոցի միջին օղակում բազմիմաստ բառերի ուսումնասիրման անհրաժեշտությունն ու արդյունավետ մեթոդիկայի հիմնավորումը որպես սովորողների լեզվամտածողության, լեզվական գիտելիքների և կարողությունների, հաղորդակցական ունակությունների զարգացման միջոց:
2. Բազմիմաստ բառերի ուսումնասիրման հաջորդայնությունն ու մեթոդական տիպականացումն ըստ նրանց յուրացման դժվարությունների:
3. Մեր կողմից մշակված բազմիմաստ բառերի յուրացումն ապահովող առաջադրանքների, վարժությունների, փոխներգործուն մեթոդների և ժամանակակից տեխնոլոգիաների մեթոդապես արդյունավետ համակարգն ու դրա հիմքում ընկած սկզբունքները:

Հետազոտության փորձաքննությունը և ներդրումը. Հետազոտության փորձաքննությունն իրականացվել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի «Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի» և «Մանկավարժության տեսության և պատմության» ամբիոնների համատեղ նիստերում, արդյունքները քննարկվել և ներդրվել են փորձարարության բազա հանդիսացած դպրոցներում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են տպագրված գիտամեթոդական վեց հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից. այն պարունակում է 8 աղյուսակ և 4 տրամագիր:

Ատենախոսության ծավալը համակարգչային 170 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմավորվում է թեմայի արդիականությունը, սահմանվում են ատենախոսության նպատակը, գիտական վարկածը, խնդիրները, հետազոտության օբյեկտը, առարկան, մեթոդական հիմքերը, ներկայացվում են հետազոտության փուլերը, շարադրվում գիտական նորույթը, աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը, ինչպես նաև տրվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին գլուխը ***(«Բազմիմաստ բառերի ուսումնասիրման գիտատեսական և մեթոդաբանական հիմքերը»)*** բաղկացած է երեք ենթագլուխներից:

1.1 ենթագլխում տրվում են բազմիմաստության ուսումնասիրման պատմատեսական նախադրյալները:

1.2 ենթագլխում՝ բազմիմաստության ուսումնասիրման մեթոդիկան տարրական դասարաններում:

1.3. ենթագլխում՝ բազմիմաստության ուսումնասիրման հիմնախնդիրները հիմնական դպրոցում:

Երկրորդ գլուխը(«***Բազմիմաստ գոյականների ուսումնասիրումը***») բաղկացած է երեք ենթագլուխներից:

2.1. «Բազմիմաստ գոյականների իմաստային-թեմատիկ խմբերի ուսումնասիրումը» ենթագլխում լուծվում են ճանաչողական, իմացական, գործնական և միջառարկայական մի շարք խնդիրներ: Ուսումնական այս կարևորագույն խնդիրների իրականացումը պայմանավորված է ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների ճիշտ ընտրությամբ:

Մեր կողմից քննարկվող գոյականական բազմիմաստ բառերի առումով կարևորվում են անձի անուն (անձնանիշ), իրի անուն (իրանիշ) գոյականները, որոնց առանձնացումը լեզվում ունի կարևոր ճանաչողական նշանակություն, լեզվի ուսուցման գործընթացում այն կնպաստի սովորողների բառապաշարի հարստացմանը: Այս առումով կարելի է տարբերակել երեք տեսակի բազմիմաստ գոյականներ՝ *անձնանիշ գոյականներ* (**սպասավոր**- 1. տնային ծառա, 2. մատուցող), *իրանիշ գոյականներ* (**նշանաբան**-1. պայմանական գաղտնի բառ, 2. գործունեության սկզբունք) և *ըստ իմաստային առումների՝ թե՛ անձնանիշ, թե՛ իրանիշ գոյականներ*, որոնք խոսքում, անշուշտ, հանդես են գալիս իմաստային դրսևորումներից միայն մեկով (**մոհիկան** - 1. անհետացած ցեղ, 2. փխբ. վերջին ներկայացուցիչ) և այլն:

Կիրառելով ***ուսուցման փոխներգործուն*** մեթոդները՝ գոյականի յուրաքանչյուր իմաստային խմբի համար աշակերտներին հանձնարարում ենք բերել օրինակներ՝ նշելով նաև նրանց փոխաբերական իմաստները:

Բազմիմաստ անձնանիշ գոյականների ուսուցման ժամանակ ուսուցիչը կարող է կիրառել նաև ուսուցման ***մակածման*** *մեթոդը* և այդ ճանապարհով ներկայացնել բազմիմաստ գոյականների տեսակներն առանձին-առանձին:

Մեթոդական նպատակներով անձնանիշ գոյականներին հաջորդում է *բազմիմաստ իրանիշ գոյականների* ուսուցումը, ինչը մենք իրականացնում ենք՝ կիրառելով ***պրոբլեմային- որոնողական*** *մեթոդը:*

Այս տիպի օրինակներ որոնելուց գտնելուց և համադրելուց հետո սովորողներին հանձնարվում է կազմել նախադասություններ:

Այս թեմատիկ միավորի ուսուցումը կազմակերպում ենք ***ուսումնական վարժությունների միջոցով:*** Այդպիսի վարժությունների շնորհիվ հնարավոր է խթանել սովորողների տրամաբանական մտածողությունը, նպաստել նրանց բառապաշարի համալրմանը, բառային և քերականական իմաստների մասին գիտելիքների յուրացմանը:

2.2. «Ըստ վերացականության և թանձրացականության տարբերվող բազմիմաստ գոյականների ուսումնասիրումը» ենթագլխում գոյականական բազմիմաստ բառերի ուսուցումը կատարվում է ըստ հետևյալ տեսակների՝

ա. Բազմիմաստ վերացական գոյականներ (վիպերգ – 1. հերոսավեպ, 2. քնարական ստեղծագործություն**, ուխտ –** 1. երդում, 2. դաշինք, 3. սրբավայր գնալը),

բ. Բազմիմաստ թանձրացական գոյականներ (մատյան - 1. գիրք, 2. պատմագիրք, 3. հաշվեմատյան, 4. արձանագրությունների գիրք, 5. տոմար, 6. աստվածաշունչ, 7. դասամատյան**, որդի** -1. երեխա, զավակ, 2. արու զավակ),

գ. Ըստ իմաստների՝ թե վերացական, թե թանձրացական բազմիմաստ գոյականներ (սեր - 1. բնական ուժեղ զգացում, որ մի սեռի անհատը տածում է մյուս սեռի նկատմամբ (վ.), 2. սիրո առարկան՝անձը (թ.) , **հույս** - 1. լավ բանի սպասում (վ.), 2. այն անձը՝ առարկան, որի վրա հույս են դնում (թ.) և այլն:

Սովորողները ձեռք բերած գիտելիքները կարող են ամրապնդել տեքստային աշխատանքների, ԳՈՒՍ մեթոդական հնարի, ինչպես նաև խմբային հետազոտական աշխատանքների միջոցով:

2.3. «Բազմիմաստություն և խոսքիմասային տարարժեքություն ունեցող գոյականների ձևաիմաստային խմբերը և նրանց ուսումնասիրումը» ենթագլխում ուսումնասիրության նյութ են դառնում *համանունություն* (**կատար** – 1. գագաթ, լեռնագագաթ, 2. թռչունի ցցունք, **կատար** – 1. իրագործում, կատարում, 2. վերջ, ավարտ), *հոմանշություն* (**ուխտ** 1. ուխտագնացություն, 2. **երդում**, 3. միաբանություն), (**երդում**. 1. երդվելը, խոստում տալը, 2. **ուխտ, խոստում**) և *հականշություն* ունեցող բազմիմաստ գոյականները (**աղմուկ**. 1. **ժխոր**, 2. փխբ. իրարանցում, վեճ, բուռն հուզում – **ծպտուն*.*** 1. **նվազ՝ կարճատև ձայն**, 2. փխբ. մի խոսք, կարճ նախադասություն):

Միևնույն բառի իմաստային ծավալում կարող են հանդես գալ մի քանի իմաստներ, որոնց առկայությունը ենթադրում է նաև տարբեր խոսքիմասային արժեքների համատեղում կամ տվյալ դեպքում քերականական-ձևաբանական (գոյական/ ածական, ածական / մակբայ և այլն) բազմիմաստություն (**գերի** - 1. ռազմագերի (գ.), 2. գերեվարված (ա.), 3. հրապուրված (ա.), 4. հլու, հնազանդ (ա.)) և այլն: Այս կարգի բառերի ուսուցումը կարող է ամբողջացնել բազմիմաստ գոյականների ուսումնասիրման ծրագրային նյութը:

Լեզվական այդ թեմայի ուսուցումն իրականացվում է որոշակի մեթոդական համակարգով, որի անմիջական բաղադրիչներն են՝ պրոբլեմային-որոնողական մեթոդը, քեյս-ստադիի մեթոդը, մակածման մեթոդը, ուսուցման փոխներգործուն մեթոդը:

Լեզվական նյութի յուրացումն ամրապնդվում է ուսումնական վարժությունների համալիրի միջոցով:

Երրորդ գլուխը ***(«Բազմիմաստ բայերի ուսումնասիրումը»)*** բաղկացած է երեք ենթագլուխներից։

3.1. «Բազմիմաստ բայերի իմաստային-թեմատիկ և ձևաիմաստային խմբերը. նրանց ուսումնասիրումը» ենթագլխում նախատեսված քերականական նյութը մատուցվում է ԽԻԿ համակարգով։ ***Խթանման փուլում*** ուսուցիչը հարցերի միջոցով ակտիվացնում է սովորողներին՝ նպատակ ունենալով բացահայտել նրանց ձեռք բերած գիտելիքները, վեր հանել արդեն իմացածը։ Այս փուլում ուսուցիչն անմիջապես շտկում է սովորողների հնարավոր սխալները։ Ըստ այդմ, նա ներկայացնում է բայի խոսքիմասային նշանակությունը և առաջարկում է սովորողներին վերհիշել, թե բայերն ինչպիսին են լինում ըստ կազմության, ըստ սեռի և ըստ արտահայտության եղանակների։

Բայական բազմիմաստ բառերի ուսուցման գործընթացում կարելի է առանձնացնել բայական բառույթի իմաստային- թեմատիկ հետևյալ հիմնական խմբերը, որոնք ցույց են տալիս՝

ա. շարժում, տեղափոխություն,
բ. գործողություններ տարբեր առարկաների նկատմամբ,
գ. մտավոր-հոգեկան գործողություններ,
դ. հասարակական կյանքին վերաբերող գործողություններ,
ե. առարկայի վիճակն իբրև եղելություն։

Իմաստի ընկալման փուլում մատուցված նոր նյութի շրջանակներում սովորողներին հանձնարարվում է ինքնուրույն աշխատանք. տրված թեմատիկ խմբերի աղյուսակները լրացնել համապատասխան բայերով և մեկնաբանել դրանք։ Իբրև խմբային աշխատանք՝ հանձնարարվում է *ուսումնասիրել իմաստային - թեմատիկ տարբեր խմբերում հանդես եկող բազմիմաստ բայերի նշանակությունները։* Այս կարգի աշխատանքը սովորողներին մղում է իմացածն իմաստավորելու և իմաստավորված գիտելիքները նախկին համակարգում տեղադրելու։

Կշռադատման փուլում սովորողներին հանձնարարվում է իրենց ներկայացրած օրինակների բովանդակությունից ելնելով՝ կազմել 2-ական հարց։ Այնուհետև կատարվում է փոխադարձ հարցում. յուրաքանչյուր խմբից մեկ սովորող այդ հարցերը տալիս է հաջորդ խմբի անդամներին, որոնցից մեկը կամ երկուսը պատասխանում են հարցերին։

Մեթոդական այս համակարգի միջոցով ուսուցիչը ոչ միայն հարստացնում է սովորողների քերականական գիտելիքները, այլև զարգացնում է նրանց ինչպես կոլեկտիվ, այնպես էլ վերացական մտածողությունը։

3.2. «Բայերի բազմիմաստությունը, փոխաբերությունը և նրանց ուսումնասիրումը» ենթագլխում տրվում է *ուղղակի* **(աղոթել -** 1. խնդրել,

ըղձալ, մաղթել, 2. աղոթք անել) և *փոխաբերական* իմաստներ ունեցող բազմիմաստ բայերի ուսուցումը (**ջրել** – 1. ոռոգել, ջուր տալ, 2. փխբ. հերքել, ցրել, վերացնել) և այլն: Թեմայի վերաբերյալ հանձնարարվում են առաջադրանքներ:

3.3. «Բայական բազմիմաստություն և բայական սեռ. ուսումնասիրումը» ենթագլխում տրվում է անցողական և անանցողական սեռադասերի բայերի ուսուցումը: *Անցողական բայերի բազմիմաստության* ուսուցման ժամանակ ուշադրություն ենք դարձնում այն հանգամանքին, որ այդ կարգի բայերը ցույց են տալիս գործողություն, որն անցնում է կրող առարկային (ուղիղ խնդրին): Դրանք ներգործական սեռի բայեր են՝ **մարսել** - 1. կերակուրն ստամոքսում հալեցնել, 2. փխբ. յուրացնել, հասկանալ, ըմբռնել, 3. փխբ. մեկի ունեցվածքն ապօրինի յուրացնել և այլն:

Անանցողական բայերն իրենց բոլոր իմաստներով դասվում են չեզոք սեռի բայերի շարքը՝ ներառվելով անանցողական սեռադասի մեջ՝**փրփրել** - 1. փրփրակալել, 2. փխբ. զայրանալ, կատաղել **փչել** - 1. քամի փչել, 2. փխբ. ստել:

Բայական բազմիմաստ բառերի ուսուցման հիմնահարցերից են բայիմաստի էությունից բխող սեռի և սեռային զուգորդումների, կրկնասեռության վերաբերյալ քերականական հիմնավոր գիտելիքների հաղորդումն ու ամրապնդումը: Քերականական այդ կարգի գիտելիքները կարող են նպաստել խոսք կառուցելու հմտությունների ձեռքբերմանը և խոսքային մշակույթի զարգացմանը: Հատկապես կարևոր է անցողական և անանցողական բազմիմաստ բայերի առանձնակի ուսումնասիրությունը, ինչպես նաև ըստ իմաստային բաշխման՝ թե՛ մեկ և թե՛ մյուս սեռադասի մեջ ներառվող բազմիմաստ բայերի վերաբերյալ գիտելիքների հաղորդումը:

Չորրորդ գլուխը *(«Հատկանշային բազմիմաստ բառերի ուսումնասիրումը»)* բաղկացած է երկու ենթագլխից:

4.1. «Բազմիմաստ ածականների ուսումնասիրման մեթոդիկան» ենթագլխում լուծվում են ճանաչողական, իմացական, գործնական և միջառարկայական մի շարք խնդիրներ, որոնց իրականացումը պայմանավորված է ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների ճիշտ ընտրությամբ ու նպատակային կիրառությամբ:

Ուսումնասիրության առարկա են դառնում բազմիմաստ որակական ածականները (**մութ** – 1. ոչ լուսավոր, 2. փխբ. տգետ, հետամնաց), հարաբերական ածականները (**ցամաքային** – 1. ցամաքին հատուկ, 2. ցամաքում ապրող), անդրադարձ է կատարվում **համեմատության աստիճաններ ունեցող բազմիմաստ որակական ածականներին և նրանց ուսուցմանը (տաք** – 1. ոչ սառը, 2. փխբ. սիրալիր, 3. փխբ. հարազատ, 4. փխբ. եռանդուն, 5. փխբ. թեժ, բուռն) **համեմատության աստիճաններ չունեցող բազմիմաստ որակական ածականներին և նրանց ուսուցմանը (դեղին** – 1.

դեղնագույն, 2. ոսկի, 3. դեղամորթ), **բազմիմաստ որակական ածականների իմաստային – թեմատիկ խմբերին**, որոնք ցույց են տալիս առարկայի ներքին հատկանիշ, մարդկանց մտավոր-բարոյական հատկանիշներ, գունային հատկանիշ և այլն։ Այնուհետև մատուցվում են բազմիմաստ հարաբերական ածականների իմաստային-թեմատիկ խմբերը։

Որակական ածականների ուսուցման համար կարելի է կիրառել արդյունավետ նոր՝ ***Քեյս-ստադիի մեթոդը***։ Այս մեթոդի էությունը որոշակի դեպքի (թեմայի) բազմակողմանի ուսումնասիրությունն է, որի ընթացքում նկարագրվում և քննարկվում է թեմայի բովանդակությունը, առաջարկվում են իրավիճակի լուծման տարբերակներ, և արվում ընդհանրացնող եզրակացություններ։

Հարաբերական ածականների համար բնութագրական է նաև համեմատության աստիճաններ չունենալը։ Հարաբերական ածականների ուսուցումը հարկ է անցկացնել *ԽԻԿ համակարգով*՝ յուրաքանչյուր փուլում հետապնդելով ուսուցման որոշակի նպատակ։

Խթանման փուլում հիշեցնում են հարաբերական ածականների վերաբերյալ տեսական գիտելիքները։ Կան բազմիմաստ այնպիսի ածականներ, որոնք իրենց բոլոր իմաստներով դասվում են հարաբերականների շարքը։

Իմաստի ընկալման փուլում (նոր նյութի յուրացում) հանձնարարվում է բառարաններից դուրս գրել ածականների ուղիղ և փոխաբերական իմաստները, դրանցով կազմել նախադասություններ կամ փոքրիկ պատումներ։

Կշռադատման փուլում խմբերն անդրադառնում են իրենց աշխատանքներին։

4.2. «Բազմիմաստ մակբայները և նրանց ուսումնասիրումը» ենթագլխում դասանյութը մատուցվում է *վերլուծական-համադրական մեթոդի* օգնությամբ, որի միջոցով կարելի է անցկացնել ընդհանրապես հատկանշային բազմիմաստ բառերի ուսուցումը։

Այդ բառերն ուսումնասիրվում են ըստ բազմիմաստ մակբայների քերականական իմաստների՝ *ձևի մակբայներ* **(աստվածորեն** – 1. աստվածաբար, 2. փխբ. արտակարգ՝ բացառիկ կերպով), *ժամանակի մակբայներ* (**հավերժ** -1. հավերժաբար, 2. փխբ. երկարատև, անընդհատ), *ընդհանրական մակբայներ.* **ձևի և չափի (չարաչար** – 1. խիստ չար՝ դաժան կերպով (ներքին – որակական հատկանիշ), 2. սաստիկ (չափի իմաստը՝ հատկանիշի սաստկացումով), **ձևի և ժամանակի (տարաժամ** – 1. անժամանակ, վաղաժամ, 2. ուշացած, ուշ ժամանակ), **ժամանակի և տեղի (հետ** – 1. դեպի ետ (առարկայի այս կամ այն կողմի՝ իբրև տեղի նկատմամբ մասնավորում), 2. հետո (տարորոշված ժամանակ) և այլն։

Այս ենթագլխում տրվում են նաև *տարարժեք բազմիմաստ մակբայների* (ած.//մկբ. ուշ – 1. ուշացած, ուշանալով (մ.), 2. ուշ ժամանակ (մ.), 3. ուշ ժամանակվա (ա.), *հոմանիշ մակբայների* (**չարաչար** (1. դաժանորեն, 2. սաստիկ) – **հեթանոսաբար** (1. հեթանոսի պես, 2. փխբ. բարբարոսաբար) , բազմիմաստ *հականիշ մակբայների* (հ**ապճեպ** (1. հապշտապ, 2. փխբ. շտապելուց ոչ լրիվ կատարված) – **հուշիկ** (1. կամաց-կամաց, 2. զգուշորեն, 3. մեղմ) ուսուցման եղանակները՝ որոշակի առաջադրանքներով:

Բազմիմաստ բառերի ուսումնասիրման մեթոդական համակարգի արդյունավետության փորձարկումը

Փորձարարական ուսուցումը իրականացվել է 2013-2014 և 2015-2016 ուսումնական տարիներում: Փորձարարական ուսուցման վայրը՝ Գյումրու թիվ 7, Աշոցքի, Ախուրյանի թիվ 1 դպրոցները:

Փորձարարական ուսուցման մասնակիցների թիվը՝ 150, փորձարարական ուսուցման նպատակը՝ մշակել հիմնական դպրոցի 6-րդ դասարանում «Բառագիտություն» բաժնի բազմիմաստ բառերի ուսուցման արդյունավետությունը ապահովող մեթոդիկա, ինչպես նաև փորձարկել, բացահայտել հիմնական դպրոցի միջին օղակում սովորողների գիտելիքները հայոց լեզվի կառուցվածքի, լեզվական միավորների, նրանց միջև առկա հարաբերությունների վերաբերյալ, ինչպես նաև լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծության ձևավորվածության մակարդակը:

Հայոց լեզվի, մասնավորապես բազմիմաստ բառերի ուսուցման նկատմամբ սովորողների վերաբերմունքը և կարծիքը պարզելու համար նրանց առաջարկվել է հարցաթերթիկ:

Հարցաթերթիկ 1

1. Ի՞նչ նպատակի է ծառայում հայոց լեզվի դասընթացը.
   ա) գրագիտություն սովորելու,
   բ) բառապաշարի հարստացման,
   գ) անսխալ և վարժ գրելու ու կարդալու հմտությունների ձևավորման,
   դ) բանավոր հաղորդակցման ապահովման նպատակ:
2. Ձեր կարծիքով ինչպիսի՞ դեր են կատարում բազմիմաստ բառերը հայոց լեզվի քերականության կառուցվածքում.
   ա) հանդես են գալիս որպես խոսքի մասերի կառուցվածքային միավոր,
   բ) բառակազմական դեր են կատարում ,
   գ) նպաստում են խոսքի ճիշտ կառուցմանը:
3. Ձեր կարծիքով բազմիմաստ բառերը ինչու՞ եք ուսումնասիրում.

ա) բազմիմաստ բառերի ուսուցումը անհրաժեշտ է ճիշտ խոսք կառուցելու և հաղորդակցվելու համար,

բ) այն օգնում է տարբեր իրադրություններում համապատասխան խոսքային վարքագիծ դրսևորելու կարողության ձևավորմանը,

գ) օգնում է հայոց լեզվի «Բառագիտություն» և «Ձևաբանություն» բաժինները լիարժեք կերպով յուրացնելու համար:

4. Բազմիմաստ բառերի ուսուցումը արդյունավե՞տ է՝

ա) ավանդական մեթոդներով,

բ) փոխներգործուն մեթոդների և ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ,

գ) չեմ կողմնորոշվում:

Հարցմանը մասնակիցների 43%-ը առաջին հարցի վերաբերյալ պատասխանել է, որ հայոց լեզվի դասընթացն ուսումնասիրում են գրագիտություն ձեռք բերելու, 31%-ը՝ բառապաշարի հարստացման, իսկ 26%-ը՝ անսխալ և վարժ գրելու ու կարդալու հմտությունների ձևավորման համար:



1-ին հարցի պատասխանները տոկոսներով.

Տրամագիր -1. Ի՞նչ նպատակի է ծառայում հայոց լեզվի դասընթացը.



Տրամագիր- 2. Ինչպիսի՞ դեր են կատարում բազմիմաստ բառերը հայոց լեզվի քերականական համակարգում.

2-րդ հարցին՝ «Ի՞նչ դեր են կատարում բազմիմաստ բառերը հայոց լեզվի քերականական համակարգում, 34%-ը պատասխանել է, որ բազմիմաստ բառերը հանդես են գալիս որպես խոսքի մասերի կառուցվածքային միավորներ, 28%-ը նշել է, որ դրանք բառակազմական դեր են կատարում, 38%-ը՝ դրանք նպաստում են խոսքի ճիշտ կառուցմանը:



.

Տրամագիր - 3. Ձեր կարծիքով բազմիմաստ բառերն ինչո՞ւ եք ուսումնասիրում

3-րդ հարցին սովորողների 46%-ը պատասխանել է, որ այն անհրաժեշտ է ճիշտ խոսք կառուցելու և հաղորդակցվելու համար, 34 %-ը պատասխանել է,

որ այն օգնում է տարբեր իրադրություններում համապատասխան խոսքային վարքագիծ դրսևորելու կարողության ձևավորմանը, իսկ 20%-ի կարծիքով՝ լիարժեք յուրացնելու հայոց լեզվի «Զևաբանություն» և «Բառագիտություն» բաժինները։



Տրամագիր-4. Բազմիմաստ բառերի ուսուցումն արդյունավե՞տ է.

4-րդ հարցին՝ «Ո՞ր մեթոդով է արդյունավետ բազմիմաստ բառերի ուսուցումը», սովորողների 21%-ը պատասխանել է, որ այն արդյունավետ է ավանդական մեթոդներով, 32%-ը՝ փոխներգործուն մեթոդներով և ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներով, 47%-ը նշել է, որ չի կողմնորոշվում:

Ստանալով հարցաթերթիկների պատասխանները և դրանց արդյունքները ամփոփելուց հետո, մենք փորձարկել ենք մեր կողմից առաջարկվող բազմիմաստ բառերի ուսուցման մեթոդիկան:

Փորձարկման ընթացքում ընդգրկվել են հետևյալ թեմաները.

- Ըստ իմաստի տարբերակվող բազմիմաստ գոյականների ուսուցումը:
- Ըստ վերացականության և թանձրացականության տարբերվող բազմիմաստ գոյականների ուսուցումը:
- Բազմիմաստ գոյականների իմաստային-թեմատիկ խմբերի ուսուցումը:

Դիտարկվել են քննարկվող նյութին առնչվող համապատասխան բառապաշար և բազմիմաստ բառեր պարունակող գրական հատվածներ:

Փորձարարական ուսուցման ընթացքում առաջնորդվել ենք «Հայոց լեզու և գրականություն» հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական ծրագրով նախատեսված ուսումնական նյութով (6-7-րդ դասարաններ): Միևնույն ժամանակ մեր կողմից ընտրվել և առաջարկվել են լրացուցիչ տեքստեր, առաջադրանքներ և վարժություններ:

Բազմիմաստ բառերի ուսումնասիրումը արդյունավետ դարձնելու նպատակով մեր կողմից ընտրված և հիմնավորված փոխներգործուն մեթոդների ու տեխնոլոգիաների արդյունավետության ստուգման համար փորձարարական աշխատանքների վերջում անցկացվել է ստուգողական աշխատանք: Ընդ որում, փորձարարական խմբում կիրառել ենք ուսուցման ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ, իսկ ստուգողական խմբերում՝ ավանդական մեթոդներ:

Ստուգողական առաջադրանքների կատարման արդյունքները ներկայացված են աղյուսակով և տրամագրով:

Փորձարարական աշխատանքների արդյունքների վիճակագրական Վերլուծություն

Առաջադրանքների համարները Սովորողների թիվը	1		2		3		4	
	փորձ.	ստուգ.	փորձ.	ստուգ.	փորձ.	ստուգ.	փորձ.	ստուգ.
Դրական շեմը չեն հաղթահարել	12	15	12	6	17	30	8	12
Դրական շեմը հաղթահարել են, բայց ունեն մեծաքանակ սխալներ	18	10	28	24	20	40	22	28
Կատարել են սխալներով	50	40	44	45	33	26	42	31
Կատարել են բացարձակ անսխալ	20	35	16	25	30	4	28	29
Ընդհանուր թիվը	100	100	100	100	100	100	100	100
Առաջադիմությունը Ա=Ը-Ե/Ը+100%	88	85	88	94	83	70	92	88

Ա= Ը-Ե/ Ը+100%

Ա- առաջադիմություն, Ը- ընդհանուր թիվ

Ե- դրական շեմը չհաղթահարածների թիվը (երկուսներ)

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության արդյունքները հավաստում են առաջադիր գիտական վարկածի ճշմարտացիությունը.

1. Բազմիմաստ բառերի ուսումնասիրման մեթոդական համակարգի կատարելագործումը նպաստում է հիմնական դպրոցի միջին օղակում սովորողների գրավոր և բանավոր կապակցված խոսքի զարգացմանը, անձի հաղորդակցական կարողությունների ձևավորմանը, միջանձնային հարաբերությունների կարգավորմանն ու անձի սոցիալականացմանը:

2. Անհրաժեշտ է հիմնական դպրոցի հայոց լեզվի ծրագրում և 5-9-րդ դասարանների դասագրքերում բազմիմաստ բառերի ուսումնասիրության հարցերին պատշաճ ուշադրության դարձնել:

3. Բազմիմաստ բառերի ուսումնասիրումը նպատակահարմար է իրականացնել փոխներգործուն մեթոդների («Մտագրոհ», «Տ - ձև աղյուսակ», «Անավարտ նախադասությունների ամբողջացում»), համագործակցային, կոլեկտիվ ուսուցման տեխնոլոգիաների կիրառմամբ (պրոբլեմային առաջադրանքներ, աշխատանք համագործակցային խմբերով կամ քարտ-առաջադրանքների միջոցով) և այլն:

4. Բազմիմաստ գոյականների և բայերի ուսումնասիրման ընթացքում վճռորոշ նշանակություն ունի նրանց իմաստային-քերականական խմբերի բացահայտումը, որոնք որոշակի գաղափար են տալիս այդ միավորների գործառական ոլորտների վերաբերյալ՝ նպաստելով սովորողների խոսքի պատկերավորման համակարգի լիարժեք դրսևորմանը:

5. Բազմիմաստ գոյականների և բայերի ուսումնասիրման համատեքստում նրանց ձևաիմաստային խմբերի՝ համանունների, հոմանիշների և հականիշների բառաքերականական հատկանիշների յուրացումը կարող է նպաստել սովորողների խոսքի ոճական հնարավորությունների կատարելագործմանը և բառապաշարի հարստացմանը:

6. Ածականի որակական և հարաբերական տեսակների, նրանց հատկանիշների ուսուցումը նպատակ ունի առաջին հերթին ապահովելու պատկերավոր խոսքին ներկայացվող պահանջները: Հարցադրումը մեթոդապես ճիշտ լուծելու դեպքում կարող է հարստանալ սովորողների պատկերավոր մտածողությունը, որը միաժամանակ կնպաստի նրանց ոճաբանական գիտելիքների շրջանակների ընդլայնմանը:

7. Բազմիմաստ մակբայների ուսումնասիրումն ապահովում է գործողության տարաբնույթ հանգամանքների գիտակցական արժևորումը: Իմաստային նրբերանգներ և էական տարբերություններ ցուցաբերող մակբայական միևնույն բառույթի գործածությունը խոսքային միջավայրում մեծապես պայմանավորված է նրա իմաստային տարբերակվածության

ըմբռնումով, որը յուրացնելու դեպքում խոսքը կարող է հարստանալ ինքնատիպ պատկերներով, գործողության մակդիրներով, համեմատություններով, հակադրություններով և ոճական այլ հնարներով:

Աշխատանքի հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հոդվածներում.

1. Բազմիմաստ գոյականների իմաստային-թեմատիկ խմբերը, Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ, «Հայագիտական հանդես», N1-2, Ե., 2010, էջ 86-93:
2. Բազմիմաստ գոյականների իմաստային-թեմատիկ խմբերի ուսուցումը, «Լեզու և կրթություն», N 2, «Զանգակ-97», հրատ., Ե., 2011, էջ 36-42:
3. Բազմիմաստության ուսուցման հիմնախնդիրները հանրակրթական դպրոցում, «Մխիթար Գոշ», Գիտական հոդվածներ, Վանաձոր, 2015, 2 /43/, էջ 76-80:
4. Գոյականական բազմիմաստ բառերի ուսուցման մեթոդիկան, Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ, «Հայագիտական հանդես» 1/31/, Ե., 2016, էջ 73-83 (Համահեղինակ՝ Լ.Խաչատրյան):
5. Բազմիմաստ բայերի ուսուցումը, Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ, «Հայագիտական հանդես», 1/32/, Եր., 2016, էջ 161-170:
6. Բազմիմաստ ածականների ուսուցման մեթոդիկան, «Մանկավարժական միտք», 1-2 (60-61), «Զանգակ» հրատ., Ե., 2016, էջ 235-240:

АВЕТИСЯН ГАЯНЕ ОГАНЕСОВНА

МЕТОДИКА ИЗУЧЕНИЯ МНОГОЗНАЧНЫХ СЛОВ В ОСНОВНОЙ ШКОЛЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 – “Методика преподавания и воспитания” (армянский язык). Защита диссертации состоится 26 сентября в 12 часов на заседании специализированного совета 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Меци 17.

РЕЗЮМЕ

Актуальность нашего исследования обусловлена, с одной стороны, необходимостью знания многозначных слов на письменной и в устной речи, важностью их роли в формировании коммуникативных навыков личности, упорядочении межличностных отношений и социализации личности, с другой стороны, отсутствием должного внимания к проблеме в программе по армянскому языку основной школы и в учебниках 5-9-х классов.

Цель исследования заключается в разработке эффективной методики изучения многозначных слов в основной школе с учетом важных коммуникативно-функциональных сторон данного языкового факта и ее апробации в средних классах.

Объектом исследования является процесс обогащения словарного запаса учащихся общеобразовательной основной школы.

Предметом исследования является методика изучения многозначных слов в основной школе.

Задачи исследования:

1. Проанализировать критерии, программы и учебники по армянскому языку основной школы с точки зрения изучения многозначных слов.

2. Основываясь на результаты анализа, внедрить систему методических указаний по повышению эффективности процесса изучения многозначных слов.

Научная новизна исследования

● на основании разноаспектных исследований разработаны и внедрены в основную школу методика изучения многозначных слов, комплекс принципов

изучения, упражнений, заданий, современных методов обучения, технологических и педагогических условий;

● разработаны и апробированы модели уроков изучения многозначных слов с направленностью на учащихся.

Теоретическое и практическое значение исследования:

● выявлены особенности и научно-педагогические принципы процесса изучения многозначных слов в среднем звене основной школы;

● разработаны и предложены новые теоретические положения изучения многозначных слов, расширяющие содержание методики изучения армянского языка и способствующие правильной научно-методической организации уроков.

На защиту вынесены следующие положения:

- Обоснование эффективной методики и необходимости изучения многозначных слов в среднем звене основной школы как средство развития языкового мышления, языковых знаний и навыков, коммуникативных способностей учащихся.
- Разработанная нами методически эффективная система заданий, упражнений, современных технологий, обеспечивающих усвоение многозначных слов.

Апробация и внедрение исследования:

Апробация исследования проведена на совместном заседании кафедр «Армянского языка и методики его преподавания» и «Теории и истории педагогики» АГПУ им.Х. Абовяна, результаты апробации обсуждены и внедрены в школы, выступающие в качестве экспериментальных баз.

Основные положения диссертации отражены в шести научно-методических публикациях.

Структура и объем исследования: Объем диссертации составляет 170 компьютерных страниц, включает 8 таблиц и 4 диаграммы. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы.

AVETISYAN GAYANE HOVHANNES
METHODS OF TEACHING POLYSEMANTIC WORDS
AT PRIMARY SCHOOL

Thesis 13.00.02. for the degree of candidate of pedagogical sciences on the specialty "Teaching and Upbringing Methodology (Armenian Language)"

The defense of the thesis will be held on 26 September at 12 in 2018 at the session of 020 special council of the RA SAC acting at Kh. Abovyan Armenian State Pedagogical University

Address: 0010, Yerevan, Tigran Mets street 17

SUMMARY

The relevance of the research is on the one hand conditioned with the importance of the presence of polysemantic words in the oral and written speech of the students, the formation of the abilities of a person's communication skills, the regulation of interpersonal relationships, a person's role in the spheres of socialization and on the other hand – with the lack of proper attention to the problem in the coursebooks of the 5-9th grades within the scopes of the Armenian language.

The aim of the research is to work out the modern effective system of methods of teaching polysemantic words at the primary school and to test it in the middle classes of the primary school based on the essential communicative-practical features of that linguistic phenomenon.

The object of the research is the process of enriching vocabulary of the students at the primary school.

The subject of the research is the method of teaching polysemantic words at the primary school.

The tasks of the research are;

- to analyze the criteria of the Armenian Language, the programs and the course-books of the Primary School from the point of view of teaching polysemantic words
- to input a methodological system of instructions benefiting the effectiveness of the procedure of investigating polysemantic words based on the research of polysemantic words

The scientific novelty of the research lies in the fact that:

- On the basis of various studies a complex of principles of teaching vocabulary, exercises, assignments, modern methods of teaching, technologies and methodological criteria have been elaborated and introduced to primary school

- Models of student-centered investigation of polysemantic words have been elaborated and experimented

The Theoretical and Practical importance of the research:

- The peculiarities of the process of investigation of polysemantic words and the scientific-pedagogical principles of their study in the middle circle of the primary school have been revealed
- The new theoretical regulations of the investigation of polysemantic words have been

  elaborated and proposed, which enlarge the content of teaching the Armenian language and serve as a basis for the correct organization of the course from the scientific- methodological point of view.
- The results of the research can be input into the process of teaching Armenian at primary schools, as well as be applied in the programs of the secondary school and in the books teaching mother tongue and Armenian.

The following principles are going to be defended;

1. The necessity of investigating the polysemantic words in the middle circle of the primary schools and and the groudning of effective methodology as language-thinking of the learners, means of enriching their linguistic knowledge and skills, communicative abilities

2. The principles in the base of the assignments, exercises, mutually influential methods and the methodologically effective system of modern technologies elaborated by us and ensuring the understanding of polysemantic words

The Approbiation of the research:

The research was approbiated at Kh. Abovyan Armenian State Pedagogical University at the joined sessions of the departments of "The Theory and History of Pedagogy" and "Armenian Language and its Teaching methodology", the results were discussed and input in the schools considered to be experimental bases.

The results of the study were reflected in the scientific articles.

The structure and volume of the thesis:

The research consists of an introduction, three chapters, a conclusion and a list of references. It includes 8 tables and 4 diagrams. The dissertation consists of 170 printed pages.